ԱԿՆԱՐԿ

2026

Եվրոպական
ներդրումային բանկ | Խումբ

ԱԿՆԱՐԿ

2026

Եվրոպական
Ներդրումային բանկ | Խումբ

Ակնարկ 2026

© Եվրոպական ներդրումային բանկ, 2026 թ.
98-100 boulevard Konrad Adenauer
L-2950 Luxembourg

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Իրավունքների և լիցենզավորման վերաբերյալ բոլոր հարցերն ուղղել publications@eib.org էլ. հասցեին:

ԵՆԲ խմբի գործունեության մասին լրացուցիչ տեղեկություններին ծանոթացեք մեր կայքում՝ www.eib.org: Կարող եք գրել նաև info@eib.org էլ. հասցեին:
Մեր նորությունների էլեկտրոնային տեղեկագիրը ստացեք հետևյալ հղումով՝ www.eib.org/sign-up:

© Լուսանկարների աղբյուրներ. EIB Group, Inelfe, Nokia, Alfredas Pliadis, Shutterstock, Jolt:

Հրաժարում.
Թարգմանության ու անգլերեն բնօրինակի միջև անհամապատասխանությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Հրատարակվել է Եվրոպական ներդրումային բանկի կողմից:
Տպագրված է FSC® թղթի վրա:

pdf. QH-01-26-001-HY-N ISBN 978-92-861-6193-3 doi. 10.2867/8314747

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ ՄԱՍԻՆ

Եվրոպական ներդրումային բանկի խումբն առանցքային դեր է խաղում Եվրոպայի Հզորացմանն աջակցելու համար ավելի կայուն և խաղաղ աշխարհում:

ԵՆԲ խումբը, որը 2025 թվականին գրանցել է ռեկորդային 100 միլիարդ եվրո ֆինանսավորում, ամեն տարի երկարաժամկետ վարկեր է տրամադրում հարյուրավոր խոշոր և փոքր նախագծերի՝ Եվրոպական ներդրումային բանկի միջոցով: Բացի այդ, այն նաև աջակցություն է ցուցաբերում արագ զարգացող նորարարական ընկերություններին Եվրոպական ներդրումային հիմնադրամի միջոցով:

Հիմնադրվելով 1958 թվականին Եվրոպական ներդրումային բանկի հետ և պատկանելով Եվրոպական Միության 27 անդամ պետություններին՝ ԵՆԲ խումբն իր վարկավորման մոտ 10%-ը հատկացնում է Եվրոպական Միությունից դուրս՝ ավելի քան 160 երկրներում իրականացվող նախագծերին: Որպես բազմակողմանի զարգացող բանկային ընտանիքի կարևոր անդամ՝ մենք նպաստում ենք համաշխարհային առաջընթացին: Այս աշխատանքը նպաստում է ամուր փոխշահավետ գործընկերային հարաբերությունների ստեղծմանը:

Հիմնվելով իր զգալի մասշտաբի, դիվերսիֆիկացված պորտֆելի և ամուր գործընկերային հարաբերությունների վրա՝ ԵՆԲ խումբն աջակցում է այն հարթակներին և ֆինանսական գործիքներին, որոնք նպաստում են կապիտալի շուկաների զարգացմանը Եվրոպայում և հավելյալ ֆինանսական ռեսուրսներ մոբիլիզացնում ինստիտուցիոնալ ներդրողներից:

ԵՆԲ խումբը խորհրդանշում է Եվրոպայի հաջողությունը: Մենք ինքնավստահության և կայունության ուղերձ ենք հղում մարդկանց, բիզնեսներին, ներդրողներին և ֆինանսական շուկաներին թե՛ Եվրոպայում և թե՛ ողջ աշխարհում:

ՄԵՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՆԲ ԽՄԲԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ **100 մլրդ եվրո**

Այդ թվում՝ 9 մլրդ եվրո
Եվրոպական Միությունից դուրս

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2025 ԹՎԱԿԱՆ Իթիրախային ցուցանիշները **16 մլրդ եվրո**

€20.6 մլրդ Կայուն քաղաքներ և տարածաշրջաններ ունենալուն

33 մլրդ եվրո Էներգետիկ անվտանգությանը Եվրոպական Միությունում

57 մլրդ եվրո Կլիմայի փոփոխության դեմ պայքարին և շրջակա միջավայրի կայունությանը

27.8 մլրդ եվրո Էկոտեխնոլոգիաների և կայուն զարգացման պարտատոմսերին

€9.8 մլրդ Վերականգնվող էներգիային
(միայն Եվրոպական ներդրումային բանկ)

10.3 մլրդ եվրո Սոցիալական ենթակառուցվածքին

22.4 մլրդ եվրո TechEU հարթակի ֆինանսավորմանը

4 մլրդ եվրո Անվտանգությանն ու պաշտպանությանը

29.7 մլրդ եվրո Խորհրդատվական օգնությամբ աջակցվող ֆինանսավորմանը

26.8 մլն Մարդկանց ավելի ապահով խմելու ջրին

9.2 մլն Մարդկանց համար ավելի լավ սանիտարահիգիենիկ պայմաններին

18.5 մլն Երաշտից ավելի լավ պաշտպանությանը

6.9 մլն Ջրհեղեղներից ավելի լավ պաշտպանությանը

ՄԵՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամեն տարի ԵՆԲ խումբը ֆինանսավորում է հարյուրավոր նոր նախագծեր, որոնք աջակցում են Եվրոպական Միության առաջնահերթություններին՝ կլիմայի փոփոխության դեմ պայքար, տեխնոլոգիաներ, բոլորին հասանելի բնակարաններ, անվտանգություն և պաշտպանություն, գյուղատնտեսություն և բազմաթիվ այլ ոլորտներ: Մեր աշխատանքն ընդլայնում է հնարավորությունները ողջ Եվրոպայով, արագացնում է կայուն ֆինանսավորման զարգացումը, խթանում է կապիտալի շուկաների զարգացումը և ապահովում Եվրոպայի կայուն ներկայությունն ամբողջ աշխարհում:

1

Բիսկայան ծոցի միջցանցային կապակցիչը նշանակալի նախագիծ է, որը կխթանի էլեկտրամատակարարման հզորությունը Իբերական թերակղզու և Եվրոպայի մնացած մասի միջև:

ԿԼԻՄԱՅԻ ԲԱՆԿԸ

Եվրոպական ներդրումային բանկի խումբը մաքուր էներգիայի անցմանն ուղղված աշխատանքների առաջնագծում է: Մենք խթանում ենք այն ներդրումները, որոնք կրճատում են ջերմոցային գազերի արտանետումները բոլոր չափերի ընկերություններում: Մենք ֆինանսավորում ենք նախագծեր, որոնք օգնում են համայնքներին հարմարվել փոփոխվող ապագային:

11.6 մլրդ եվրո էներգետիկ համակարգերում և պահեստներում

1 տրլն եվրո կլիմայի և բնապահպանական նախագծերի համար 2020 թ-ից 2030 թ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿՐԿՆԱՊԱՏԿՈՒՄ

Եվրոպական ներդրումային բանկը տրամադրում է 1.6 միլիարդ եվրո վարկ՝ Բիսկայան ծոցի էլեկտրաէներգիայի միջցանցային կապակցման նախագծին աջակցելու համար, որն իրականացվում է Red Eléctrica de España և RTE Réseau de transport d'électricité ընկերությունների կողմից: Այս նախագիծը կկրկնապատկի Ֆրանսիայի և Իսպանիայի միջև էներգետիկ ցանցի հզորությունը՝ միլիոնավոր մարդկանց ապահովելով ավելի անվտանգ և մատչելի էլեկտրաէներգիայով:

2

Այս տեխնոլոգիաներն առանցքային դեր են խաղում բջջային համակարգերի աշխատանքի, էներգաարդյունավետության և կիբերանվտանգության բարելավման գործում:

ՆՈՐԱՐԱ-ՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականին ԵՆԲ խումբը գործարկեց TechEU հարթակը՝ Եվրոպայում տեխնոլոգիական նորարարությունների ֆինանսավորման երբևէ ամենամասշտաբային ծրագիրը: Մինչև 2027 թվականը այն կտրամադրի 70 միլիարդ եվրո ֆինանսավորում՝ վարկերի, վենչուրային պարտքի և կապիտալի միջոցով՝ մոբիլիզացնելով 250 միլիարդ եվրոյի ներդրումներ: Շնորհիվ նորարարական տեխնոլոգիաների ինկատմամբ ավելի հավակնոտ մոտեցման և ռիսկի նկատմամբ ավելի մեծ պատրաստակամության՝ Եվրոպայի տեխնոլոգիական առաջատարության կայունությանն ուղղված նորարարական ֆինանսավորումն ավելացել է՝ հասնելով ռեկորդային 22.4 միլիարդ եվրոյի:

4.1 մլրդ եվրո ԱԲ ոլորտի ներդրումներում

ԲՋՋԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Nokia-ն Եվրոպական ներդրումային բանկից ստացած 870 միլիոն եվրո վարկը կներդնի հաջորդ սերնդի բջջային ցանցերի մշակման մեջ: Ընկերությունն աշխատելու է 5G-ընդլայնված և 6G համակարգերի վրա՝ ամրապնդելով Եվրոպայի տեխնոլոգիական առաջատարությունը բջջային կապի ոլորտում:

3

Indra և Thales ընկերությունների կողմից տրամադրվող վարկերը կնպաստեն առաջադեմ տեխնոլոգիաների զարգացմանը և կաջակցեն հազարավոր հետազոտողների և ինժեներների:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲ խումբը ներդրումներ է կատարում Եվրոպայում խաղաղության և անվտանգության համար: Այս ֆինանսավորումն օգնում է նորարարական ընկերություններին և ավելի հաստատված բիզնեսներին առաջ քաշել մարդկանց և սահմանների պաշտպանությանն ուղղված նախագծերը: Արբանյակայինից մինչև կիբերանվտանգության լուծումներ, ենթակառուցվածքներ և ռազմական մոբիլություն, մենք աջակցում ենք Եվրոպան անվտանգ և միջամտությունից զերծ պահող գաղափարներին:

2025 թվականը շրջադարձային կետ էր անվտանգության և պաշտպանության աջակցության հարցում՝ հատկացնելով ավելի քան 4 մլրդ եվրո ֆինանսավորմանը

ԱՐԵԼԵՅԱՆ ԹԵԵՎԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԵՆԲ խումբն ամրապնդում է Լիտվայի ռազմական հնարավորությունները, այդ թվում նաև՝ ներդնելով 540 միլիոն եվրո և տրամադրելով խորհրդատվական աջակցություն Լիտվայի և Բելառուսի սահմանի մոտ գտնվող ռազմական բազայի համար: Այստեղ կտեղակայվի գերմանական բրիգադ՝ ապահովելով Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության արագ արձագանքը տարածաշրջանում:

Խումբը նաև մոտավորապես 1 միլիարդ եվրո է տրամադրում Եվրոպայի երկու առաջատար պաշտպանական ընկերությունների՝ Indra-ի և Thales-ի կողմից իրականացվող հետազոտական ծրագրերի ֆինանսավորման համար: Սա հնարավորություն կտա կառուցել նոր օբյեկտներ և ակտիվացնել պաշտպանության, տիեզերական տեխնոլոգիաների և ավիացիայի հետազոտություններն ու մշակումները՝ քաղաքացիական և ռազմական թռիչքների համար:

4

Այս արդիականացման նախագծի կարևոր նպատակներից մեկն է բարձրացնել ճանապարհների դիմադրողականությունը կլիմայական փոփոխության նկատմամբ:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք ներդրումներ ենք կատարում հասարակական համախմբվածությունը խթանող նախագծերում, որոնք նվազեցնում են տարածաշրջանային անհավասարությունը Եվրոպական Միությունում և հզորացնում ավելի քիչ բարգավաճող համայնքները: Դա նպաստում է անկողմնակալ տնտեսական աճին և օգնում մարդկանց հաջողության հասնել՝ անկախ բնակության վայրից, որպեսզի նրանք ստիպված չլինեն լքել իրենց տները՝ ավելի լավ հնարավորություններ փնտրելու համար:

42.8մլրդ եվրո **2025 թ-ին համախմբածության ֆինանսավորման համար**

ԿՈՆԿՐԵՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2025 թվականին ԵՆԲ-ն ներդրել է գրեթե 1.4 միլիարդ եվրո Լեհաստանի ավելի քիչ զարգացած շրջաններում՝ ավտոմայրուղիների մոդեռնիզացման համար: Gospodarstwa Krajowego բանկի հետ ներդրումները խթանում են տնտեսական գործունեությունը և տարածաշրջանային զարգացումը՝ աջակցելով երկրում քաղաքացիական և զինվորական մոբիլությանը: Այս նախագծերն աջակցվել են խորհրդատվական ծառայություններով, որոնք ներկայացրել են ցանցի ամենից շատ բարելավման կարիք ունեցող ոլորտները:

5

Պետական սեգմենտի աշխատակիցների համար, որոնք ապահովում են քաղաքների գործառնականությունը, բնակարանային հարցն ամենահրատապ խնդիրներից մեկն է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Մեր սոցիալական ֆինանսավորումը բարելավում է քաղաքային կյանքը, մեծացնում է մատչելի բնակարանով ապահովման հնարավորությունները և կատարելագործում է հանրային ծառայությունները: Սա աջակցում է այն ներդրումները, որոնք օգնում են մարդկանց նոր հմտություններ ձեռք բերել և հոգ տանել հիվանդների ու տարեցների մասին: Սա հիմք է դնում ողջ Եվրոպայում ներառական և կայուն աճի համար:

10.3 մլրդ **2025 թվականին սոցիալական ենթակառուցվածքային ներդրումներին**

ՀԻՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Մինչև 2030 թվականը ԵՆԲ խումբը նախատեսում է աջակցել մոտ մեկ միլիոն մատչելի և էկոլոգիապես մաքուր տների կառուցմանը: Չեխական առաջատար բանկերից մեկը՝ Česká spořitelna-ն, 60 միլիոն եվրո վարկով ֆինանսավորում է Պրահայում ավելի քան 1000 մատչելի տների կառուցումը բուժքույրերի, ուսուցիչների և այլ կարևոր աշխատակիցների համար: Պորտուգալիային տրվող 1.3 միլիարդ եվրոյի վարկը կաջակցի մատչելի բնակարանների կառուցմանը: Իռլանդիան մեկնարկել է 400 միլիոն եվրոյի վարկային ծրագիր՝ սոցիալական բնակարանաշինության ծառայություն մատուցողներին երկարաժամկետ, ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսավորում տրամադրելու համար: Ավստրիական Erste բանկը 200 միլիոն եվրո է ստացել բնակարանաշինության ոլորտում ներդրումներ կատարելու համար, այդ թվում՝ երիտասարդ և տարեց վարձակալների համար նախատեսված նախագծերում:

6

Գյուղատնտեսության ոլորտն Իտալիայի տնտեսության և ազգային ինքնության հենասյունն է:

Գյուղատնտեսությունն առանցքային դեր է խաղում մեր պարենային անվտանգության, սննդի որակի և տնտեսական զարգացման ապահովման գործում: Մենք ֆինանսավորում ենք ձկնորսության, անտառապահության, սննդի որակի, գյուղական շրջանների զարգացման և կլիմայի համար անվնաս արտադրության կազմակերպման նախագծեր: Մեր վարկերն ու խորհրդատվական ծառայությունները բարելավում են ֆերմերների կենսապահովումը, պաշտպանում շրջակա միջավայրը և նվազեցնում գյուղատնտեսական գազերի արտանետումները:

6.9մլրդ եվրո **2025 թ-ին գյուղատնտեսության և կենսատնտեսության ոլորտի ներդրումներում**

ԻՏԱԼԻԱՅԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ԵՆԲ խումբը տրամադրում է ավելի քան 100 միլիոն եվրոյի վարկ Իտալիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Banca di Asti տարածաշրջանային բանկին՝ երիտասարդ ֆերմերներին և փոքր կենսատնտեսական ընկերություններին ֆինանսավորելու նպատակով: Banca di Asti-ի կողմից հատկացված միջոցների առնվազն 10%-ը կտրամադրվի երիտասարդ ֆերմերներին:

7

Բանկն օգնում է վերանորոգել Ուկրաինայի մոտ 150 համայնքների ավելի քան 500 հանրային շենքեր:

ԳԼՈԲԱԼ ՆԵՐԴՐՈՒՄ

Մենք ամրապնդում ենք փոխշահավետ գործընկերային հարաբերությունները ողջ աշխարհում: Մենք ակտիվորեն աջակցում ենք Ուկրաինային և խթանում ենք կայուն զարգացումն այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են՝ Միջերկրածովյան և Ենթասահարական Աֆրիկան: Մենք նպաստում ենք կլիմայի փոփոխության դեմ պայքարին և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացմանը: Մենք ջրամատակարարման համաշխարհային ոլորտում ամենախոշոր վարկատուներից մեկն ենք:

Եվրոպական Միությունից դուրս իրականացվող ԵՆԲ-ի ներդրումների երեք քառորդը աջակցել է Global Gateway-ի նախագծերին:

ԻՆՉՊԵՍ ԱՋԱԿՑԵԼ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Ուկրաինան Եվրոպական ներդրումային բանկի գերակա առաջնահերթություններից մեկն է և հաջորդ տասնամյակում վերջինիս ֆինանսավորման կարիքները գնահատվում են 524 միլիարդ դոլար: Բացի արտակարգ իրավիճակների օգնությունից, ԵՆԲ խումբը կենտրոնանում է այն ոլորտների վրա, որոնք կարող են արագ ապահովել ամենամեծ բարելավումները: 2025 թվականին Եվրոպական ներդրումային բանկն աջակցել է 1.5 միլիարդ եվրո արժողությամբ նախագծերի, որոնք օգնել են ընտանիքներին ջեռուցել իրենց տները, ապահովել երեխաների կրթությունը, իսկ մարդկանց ստանալ առողջապահական ծառայությունները:

8

Արժեթղթավորումներն անմիջականորեն աջակցում են խնայողական և ներդրումային միության նպատակների իրականացմանը:

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՆԲ խումբը, իր համաեվրոպական ուղղվածությամբ, մշակում է առաջատար ֆինանսական գործիքներ, որոնք հիմք կհանդիսանան իրական խնայողությունների և ներդրումների միություն ստեղծելու համար: Մասնավոր ներդրումների խթանման և արագացման գործում իր կարևոր դերի միջոցով՝ ԵՆԲ խումբը խնայողությունները ուղղում է դեպի եվրոպական տեխնոլոգիական առաջատարներին, նորարարներին, ստարտափներին և փոքր բանկերին: Ավելի ինտեգրված կապիտալի շուկաները թույլ կտան, որ ներդրումներն ու խնայողություններն ազատ տեղաշարժվեն ամբողջ Եվրոպական Միությամբ՝ նպաստելով անհատներին, ներդրողներին և ընկերություններին:

Խնայողությունների և ներդրումների միությունը կօգնի Եվրոպային օգտագործել իր ներքին շուկայի բոլոր հնարավորությունները:

ԱՃԻ ՍՈՒԲՍԻԴԻԱ

Եվրոպական ներդրումային բանկը ներդրումներ է կատարում եվրոպական բանկերի կողմից թողարկվող արժեթղթավորումներում և մշակում է նորարարական արժեթղթավորման կառուցվածքներ՝ աջակցելու ավելի շատ բիզնեսների, որոնք կենսական են իրական տնտեսության համար: Ներդրումների միջոցով աջակցելով նորարարական բանկերին արժեթղթավորման հարցում՝ ԵՆԲ խումբը նպաստում է ավելի հեշտ իրացվող և ավելի մեծ ներդրումային շուկայի ստեղծմանը: ABN AMRO ընկերության կողմից 2025 թվականին իրականացված 1 միլիարդ եվրոյի սինթետիկ արժեթղթավորման գործարքը ԵՆԲ խմբի կողմից երբևէ աջակցված ամենամեծ արժեթղթավորումն է: Սա նույնպես կարևոր քայլ է Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական ներդրումային հիմնադրամի համար, որոնք զբաղվում են արժեթղթավորման գործարքներով:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Եվրոպական ներդրումային հիմնադրամը ԵՆԲ խմբի մասնագիտացված ճյուղն է, որը օգնում է փոքր բիզնեսներին զարգանալ: ԵՆՀ-ը վարկային երաշխիքներ է տրամադրում բանկերին և օգնում նրանց ներդրումներ կատարել եվրոպական բիզնեսներում, և համագործակցում է վենչուրային կապիտալի ֆոնդերի, մասնավոր վարկային հաստատությունների և մասնավոր ներդրումային ու ենթակառուցվածքներին ուղղված ֆոնդերի հետ՝ նորարար ձեռնարկատերերին աջակցելու համար:

Եվրոպական ներդրումային հիմնադրամը ստեղծվել է 1994 թվականին՝ փոքր բիզնեսներին ֆինանսավորումն ավելի հասանելի դարձնելու համար: Այն օգնում է զարգացման տարբեր փուլերում գտնվող ընկերություններին՝ ստարտափից մինչև միջազգային մասշտաբների ծավալում: Նպատակներից մեկը՝ բիզնես ներդրումների համար Եվրոպայում ավելի լավ էկոհամակարգ ստեղծելն է, սակայն ԵՆՀ-ը նաև նպաստում է նորարարությանը, մրցունակությանը, սոցիալական ազդեցությանը և կայունությանը:

Ավելի քան 15.7 մլրդ եվրո
2025 թ-ին հատկացվել է կայունության, սոցիալական ազդեցության, նորարարության և զարգացման համար

ԵՆՀ-ն աջակցում է ապագայի լուծումներ մշակող նորաստեղծ նորարարական ընկերություններին, ինչպես նաև նոր, հեռանկարային ոլորտներում ընդլայնվող արդեն իսկ կայացած ընկերություններին:

ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական ներդրումային հիմնադրամը ներդրել է 260 միլիոն եվրո Jolt Capital հիմնադրամում՝ աջակցելով Փարիզում գտնվող ընկերությանը և ներգրավելով մինչև 800 միլիոն եվրո լրացուցիչ ներդրումներ ամբողջ աշխարհից՝ եվրոպական խոշոր տեխնոլոգիական ընկերություններին աջակցելու նպատակով: ԵՆՀ-ի ներդրումը «Եվրոպական տեխնոլոգիական չեմպիոններ» նախաձեռնության մասն է կազմում, որը խոշոր վենչուրային կապիտալի ֆոնդերում ներդրումների միջոցով ծածկում է եվրոպական ընկերությունների մասշտաբավորման բացը:

ԱԿՆԱՐԿ

2026

Եվրոպական ներդրումային բանկ | Խումբ

Բացահայտե՛ք ավելին ԵՆԲ խմբի ռազմավարական առաջնահերթությունների մասին:

pdf. ISBN 978-92-861-6193-3

© Եվրոպական ներդրումային բանկ, 05/2026 թ. HY 2025-0389